Տեղական ներուժի զորացում.

Ջավախեթիի վերափոխման ուղին

Օլեսյա Վարդանյան

Հոկտեմբեր 2025

Տեղական ներուժի զորացում.
Ջավախեթիի վերափոխման ուղին
Օլեսյա Վարդանյան

Խմբագիր. Մեդեա Տուրաշվիլի
Հայերեն թարգմանություն. Սամվել Ռուբենյան
Հայերեն թարգմանության խմբագիր. Տիգրան Տարզյան
Դիզայներ. Տորնիկե Լորթկիպանիձե
Քարտեզ. Իրակլի Ուգուլավա

Բովանդակություն

Ամփոփ նկարագիր 4

I. Ջավախեթիի փուչիկի առաջացումը 11

1. Քաղաքական ճահճացման արմատները 14
2. Քաղաքացիական հասարակությունը՝ հիմնված տեղական իրականությունների վրա 16

II. Ժողովրդական նախաձեռնություններ 18

1. Գյուլնարան և կանանց առողջությունը 20
2. Լիդան և գրքի ակումբը 21
3. Ենոքն ու ֆերմերները 23
4. Պարույրը և գյուղական խնդիրները 24
5. Հեշտիան և գյուղական հիմնադրամը 25
6. Կումուրդոն և դպրոցը, որը փոխեց ամեն ինչ 26
7. Հայկական հիմնադրամ և հիշողության թանգարաններ 28

Եզրակացություն 29

Ամփոփ նկարագիր

Դեկտեմբերյան սառնաշունչ մի օր Վրաստանի Ջավախեթիի շրջանի գլխավոր քաղաքի՝ Ախալքալաքիի կենտրոնում, լուռ հեղափոխություն էր հասունանում։ Հայոց այբուբենը ստեղծողի հուշարձանի առջև վեց երիտասարդ կին լրագրող և մեկ քաղաքացիական ակտիվիստ բազմալեզու պաստառներ էին պարզել։ Նրանք իրենց համերաշխությունն էին հայտնում այն լրագրողներին, որոնք հոսպիտալացվել էին ծանր վնասվածքներով Վրաստանի մայրաքաղաքում՝ 2025թ.-ի խորհրդարանական ընտրություններին հաջորդած փողոցային ցույցերը ոստիկանության կողմից բռնի կերպով ցրելու արդյունքում։

Թեև այլ շրջաններում նման ցույցեր արդեն տեղի էին ունեցել, սա Ախալքալաքիում իր տեսակի մեջ առաջին հանրային բողոքի ակցիան էր։ Տարածաշրջանում խնդիրները բազմաթիվ են, սակայն տեղացիները սովորաբար խուսափում են հանրային բողոքի անգամ ամենահամեստ ձևերից, իսկ քաղաքական ցույցեր կազմակերպելը, մանավանդ՝ հեռավոր Թբիլիսիի իրադարձությունների առնչությամբ, գրեթե աննախադեպ է։ Այս ակցիան շփոթություն էր առաջացրել քաղաքում. անցորդներն ապշահար էին։ «Մարդիկ ոչ միայն հրաժարվեցին մեզ աջակցել, - հիշում է մասնակիցներից մեկը, - այլև նույնիսկ ամաչում էին մեր կողմը նայել»։ Կարճատև մոմավառությունից հետո խումբը հավաքեց իր պաստառները և լուռ ցրվեց՝ վերահաստատելով այն համոզմունքը, որ նման ակտիվիզմը Ջավախեթիում անարդյունավետ է։

Սույն ամփոփագրում ներկայացվում են Ջավախեթիում գործող մի շարք ժողովրդական նախաձեռնություններ, որոնց մեծ մասը մեկնարկել են կամավորության սկզբունքով՝ առանց որևէ դոնորային աջակցության, իսկ որոշներն էլ մինչ այժմ գործում են ամբողջությամբ ոչ ֆորմալ ձևով։ Այս ջանքերը ավանդական «նախագծեր» չեն, այլ՝ փոքր ծախս պահանջող, տեղում ծնված լուծումներ, որոնք արտահայտում են ավելի խորքային մի միտում՝ անցում դեպի տեղական նախաձեռնողականությանը։

Այս դրվագը վառ պատկերացում է տալիս Վրաստանի հարավային, լեռնային այս տարածաշրջանի կյանքի մասին, որը տեղի հայերն անվանում են Ջավախք։ Շուրջ 67 հազար բնակչություն ունեցող տարածաշրջանի ճնշող մեծամասնությունը էթնիկ հայեր են, որոնք հաճախ վատ են տիրապետում վրացերենին կամ ընդհանրապես չեն խոսում և դժվարանում են իրենց երկրի լիարժեք մաս զգալ։ Թեև Ջավախեթին շուրջ երկու տասնամյակ է, ինչ պետական ինտեգրացիոն ծրագրերի կիզակետում է, առաջընթացը դանդաղ է, իսկ արդյունքները՝ կասկածելի։ Չնայած Վրաստանի մնացած մասի, ինչպես նաև հարևան Հայաստանի ու Թուրքիայի հետ առևտրային և տրանսպորտային կապերին, բնակչության զգալի մասը շարունակում է ապրել ինքնամփոփ միջավայրում, որի սահմաններն արտաքին աշխարհի համար մշուշոտ են։

Այս մեկուսացվածությունը Ջավախեթիի բնակիչներին առավել խոցելի է դարձնում։ Թեև երկու առանձին վարչական միավորներից բաղկացած տարածաշրջանն ունի տեղական ընտրովի մարմիններ, դրանց լիազորությունները սահմանափակ են և անբավարար՝ հիմնական

խնդիրներն ինքնուրույն լուծելու համար։ Փոխարենը գերիշխող դերակատարություն ունեն Վրաստանի անվտանգության ծառայությունները։ Անջատողականությունն ու անդրսահմանային հանցավորությունը կանխելու անվան տակ այս կառույցները տասնամյակներ շարունակ միջամտել են տարածաշրիջանի գրեթե բոլոր կարևոր որոշումների կայացմանը։ Երբ որևէ տեղացի՝ լինի ակտիվիստ, թե պարզապես սկզբունքային կարծիք ունեցող քաղաքացի, հատում է այն սահմանը, որը կարող է ընկալվել որպես քաղաքական ընդդիմությանը հարող դիրքորոշում, նա վտանգում է ոչ միայն իր անձնական անվտանգությունը, այլև իր ընտանիքին է ենթարկում ճնշումների։ Սրանք խնդիրներ են, որոնք անհնար է միայնակ լուծել։

2. Դրանք կարող են է՛լ ավելի զորանալ, և հնարավոր է նաև ընդարձակվել՝ ամրապնդելով կապերը տարածաշրջանային կենտրոնների և գաղափարակիցների հետ փորձի փոխանակման, ինչպես նաև կրթական ու տեղեկատվության փոխանակման ցանցերում ներգրավվելու միջոցով։

Ավելին, տեղացիները չեն կարող դրսից էական աջակցության հույս ունենալ։ 1990-ականներին հարևան Հայաստանը հանդես էր գալիս որպես որոշակի հովանավոր՝ ֆինանսական, էներգետիկ և քաղաքական աջակցություն ցուցաբերելով տեղական որոշ էլիտաների։ Սակայն ժամանակի ընթացքում, Ադրբեջանի և Թուրքիայի հետ չկարգավորված հակամարտությունների ճնշման ներքո, Հարավային Կովկասում Հայաստանի ազդեցությունը թուլացավ։ Իր հիմնական ռազմավարական գործընկերոջ՝ Ռուսաստանի հետ կենսական նշանակության ճանապարհային կապերը պահպանելու անհրաժեշտությունը թույլ չէր տալիս Երևանին լարել հարաբերությունները Թբիլիսիի հետ։ 2000-ականների սկզբից Հայաստանն աստիճանաբար հրաժարվեց Ջավախեթիի գործերին ուղղակի միջամտությունից՝ ի վերջո նպաստելով Հայաստանի քաղաքական շրջանակների և Ջավախեթիի այն ակտիվիստների միջև կապերի լիակատար խզմանը, որոնց հռետորաբանությունը հակասում էր վրացական իշխանությունների դիրքորոշմանը։

Թբիլիսիից եկող ճնշումների հանդեպ այս խոցելիությունը հատկապես ակնհայտ է դառնում Վրաստանի ընտրական շրջափուլերի ժամանակ։ Անկախ մայրաքաղաքում ծավալվող քաղաքական պայքարից՝ Ջավախեթին հետևողականորեն աննախադեպ մեծամասնություն է ապահովել տվյալ պահին իշխանության գտնվող կուսակցության համար։ Անցյալ տարվա խորհրդարանական ընտրությունների ժամանակ, երկարատև համազգային քաղաքական ճգնաժամի ֆոնին, տարածաշրջանը կրկին «Վրացական երազանք» կուսակցությանը տվեց ձայների ավելի քան 90 տոկոսը՝ երկրի ամենաբարձր ցուցանիշը։ Նույնը տեղի ունեցավ տասներկու տարի առաջ՝ 2012-ին, երբ այն ժամանակ իշխող «Միացյալ ազգային շարժումը» պարտություն կրեց երկրի գրեթե բոլոր մյուս շրջաններում՝ բացառությամբ Վրաստանի հարավի։

Ջավախեթիի քաղաքական իրականության այսպիսի կտրուկ դրսևորումները հաճախ բուռն քննարկումների առիթ են դառնում Վրաստանի լայն հանրության շրջանում։ Ընդդիմադիր գործիչներն ու քաղաքացիական հասարակության խմբերը տեղի հայերին մեղադրում են քաղաքական պասիվության, իսկ կառավարությանը՝ տարածաշրջանն ընտրակեղծիքների համար օգտագործելու մեջ։ Սակայն այս քննարկումները

երկար չեն տևում։ Քչերն են խորամուխ լինում Ջավախեթիի բարդ իրավիճակի բուն պատճառների մեջ, և արդյունքում տարածաշրջանը մնում է անփոփոխ։ Ընդդիմադիր կուսակցությունների համար Ջավախեթին մեծ հետաքրքրություն չի ներկայացնում. այն խորապես կախված է իշխող էլիտայից՝ անկախ նրանից, թե ով է իշխանության ղեկին, և համապետական մասշտաբով այնքան ընտրող չունի, որ նշանակալի դեր խաղա։ Մասնակի բացառություն են կազմում Եվրամիության ինտեգրման ծրագրերը, որոնք վերջին տասնամյակում զգալի միջոցներ են ներդրել Ջավախեթիի քաղաքացիական հասարակության զարգացման գործում։ Սակայն այլ ոլորտներում լայնածավալ բարեփոխումների բացակայության պայմաններում, անգամ սա չի հանգեցրել էական հասարակական և քաղաքական փոփոխությունների։

Այնուամենայնիվ, այս ծանր ու ճնշող իրականության պայմաններում Ջավախեթին ապրում է իր լուռ կյանքով։ Բողոքի ակցիաներ լինում են, ինչպես նաև թեժ բանավեճեր ու համայնքային հավաքներ։ Տեղացիները բարձրաձայնում են իրենց մտահոգությունները և գիտեն, թե ինչպես բանավիճել համայնքային պաշտոնյաների հետ։ Սակայն նման ակտիվությունը մնում է տարածաշրջանի սահմաններում՝ զսպված բազմաթիվ ֆորմալ և ոչ ֆորմալ սահմանափակումներով։ Այդուհանդերձ, նույնիսկ այդ փոքր, վերահսկվող միջավայրը հնարավորություն է տալիս ներքևից վեր ուղղված ժողովրդական նախաձեռնությունների ի հայտ գալուն, որոնցից որոշներն իսկապես արժանի են ճանաչման։

Սույն ամփոփագրում ներկայացվում են Ջավախեթիում գործող մի շարք ժողովրդական նախաձեռնություններ, որոնց մեծ մասը մեկնարկել են կամավորության սկզբունքով՝ առանց որևէ դոնորային աջակցության, իսկ որոշներն էլ մինչ այժմ գործում են ամբողջությամբ ոչ ֆորմալ ձևով։ Այնուամենայնիվ, դրանք լուծում են իրական, կառուցվածքային խնդիրներ՝ կապված կրթության, մեկուսացման և տնտեսական լճացման հետ, և հաջողության են հասնում հենց այն պատճառով, որ վայելում են այն մարդկանց վստահությունը, որոնց համար էլ գործում են։ Այս ջանքերը ավանդական «նախագծեր» չեն, այլ՝ փոքր ծախս պահանջող, տեղում ծնված լուծումներ, որոնք արտահայտում են ավելի խորքային մի միտում՝ անցում դեպի տեղական նախաձեռնողականությանը։

Եթե այս նախաձեռնությունները ստանան թեկուզ նվազագույն ենթակառուցվածքային աջակցություն՝ գիտելիքների փոխանակման ցանցերի, գործընկերային փորձի փոխանակման և փոքր դրամաշնորհների տեսքով, ապա կարող են դառնալ Ջավախեթիում կայուն քաղաքացիական մշակույթի ողնաշարը։ Այսօր, երբ Վրաստանի մասշտաբով քաղաքացիական հասարակության տարածքը նեղանում է, ներքևից բխող կամավորականությունը կարող է շուտով դառնալ ժողովրդավարական ներգրավվածության միակ կենսունակ ձևը։ Իսկ Ջավախեթիում, թերևս, դա արդեն իսկ այդպես է։

Անկախ իրենց մասշտաբից, այս ժողովրդական նախաձեռնություններն արժանի են ճանաչման։ Աջակցությունը պարտադիր չէ, որ միշտ ֆինանսական լինի, քանի որ դրանցից շատերն ինքնաբավ են։ Սակայն դրանք կարող են է՛լ ավելի զորանալ, և հնարավոր է նաև ընդարձակվել՝ ամրապնդելով կապերը տարածաշրջանային կենտրոնների և գաղափարակիցների հետ փորձի փոխանակման, ինչպես նաև կրթական ու տեղեկատվության փոխանակման ցանցերում ներգրավվելու միջոցով։ Այս ջանքերի

պահպանումն ու զարգացումը ոչ միայն կօգնի Ջավախեթիի փակ հասարակությունում երկխոսությունը կենդանի պահելուն, այլև հիմք կստեղծի ապագա քաղաքացիական և քաղաքական մասնակցության համար՝ այն պահին, երբ Վրաստանը դրան պատրաստ կլինի։

Գյուլնարան և կանանց առողջությունը: Հիսունն անց հասակում Գյուլնարա Էլիզբարյանը գտավ իր կյանքի նպատակը՝ դառնալով ժողովրդական ակտիվիստ։ Նա միացավ կանանց մի ցանցի, որի անդամներն այցելում են հեռավոր գյուղեր՝ վերարտադրողական առողջության շուրջ առկա տաբուները կոտրելու և մյուսներին զորացնելու համար՝ բաց զրույցների, միկրոբիզնեսների և ինքնակազմակերպվող հանգստյան հավաքույթների միջոցով։

Նախկինում Գյուլնարան տնային տնտեսուհի էր, որը մեծացնում էր իր երեխաներին, մինչ ամուսինն աշխատում էր արտերկրում։ Այժմ նա վստահելի ձայն է այնպիսի թեմաների շուրջ, ինչպիսին է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների կանխարգելումը. սրանք հարցեր են, որոնք հազվադեպ են քննարկվում այս պահպանողական հասարակության մեջ։ Չնայած առողջական խնդիրներին, այդ թվում՝ սթրեսի հետևանքով տարած սրտամկանի ինֆարկտին (երբ տեղեկացավ քաղաքացիական հասարակության վերաբերյալ Վրաստանում նախատեսվող սահմանափակումների մասին), Գյուլնարան անկոտրում է։

Այսօր նա աջակցում է նոր նախաձեռնություններին, ինչպիսիք են վրացերենի դասընթացները բոլոր տարիքի կանանց համար և պլաստիկ շշերի վերամշակման ծրագիրը՝ ցածր եկամուտ ունեցող ընտանիքներին օգնելու համար։ Նրա լուռ հեղափոխությունը ցույց է տալիս, թե ինչպես ժողովրդական ցանցերը՝ թեպետ հաճախ ոչ ֆորմալ և կամավորության սկզբունքով գործող, կարող են լրացնել հանրային առողջապահության, կրթության և կանանց համերաշխության ոլորտներում առկա էական բացերը, որոնց հարցում ինստիտուտները թերանում են։

Լիդան և գրքի ակումբը: Օրջա գյուղում Լիդա Ալմասյանը, մի խումբ ուսանողների և շրջանավարտների հետ, հիմնել է գրքի ակումբ։ Այս ակումբը պահպանողական միջավայրում ծառայում է որպես քննադատական մտածողության, երկխոսության և ազատության ձգտման հարթակ։ Երևանից և Թբիլիսիից ընտրված գրքերով՝ անհատական ազատության և բարոյականության նման թեմաների շուրջ, ակումբում տեղի են ունենում բաց քննարկումներ գրականության և ընթացիկ իրադարձությունների վերաբերյալ, որոնց հաճախ մասնակցում են նաև հյուր բանախոսներ այլ շրջաններից։ Թեև ակումբը ոչ ֆորմալ է և չունի մշտական հավաքատեղի, այն գործում է բացօթյա հանդիպումների, ինչպես նաև համեստ անդամավճարների միջոցով, որոնք օգնում են ընդլայնել գրքերի հավաքածուն։ Լիդայի համար, ով իր ժամանակը բաժանում է Թբիլիսիի և իր հայրենի գյուղի միջև, նպատակն է հաջորդ սերնդին զինել գաղափարներով, հետաքրքրասիրությամբ և կարեկցանքի զգացումով։ Սա հիմնավորապես հակասում է այն ագրեսիային, որի ականատեսն է նա եղել մեծանալիս։

Ենոքն ու ֆերմերները: Իր աշխատանքը կորցնելուց հետո Ենոք Բաբաջանյանը զրոյից, ձեռքով կառուցեց Ջավախեթիի առաջին հաջողված ջերմատնային տնտեսությունը և այն վերածեց բարգավաճող գյուղատնտեսական բիզնեսի։ Մի շրջանում, որտեղ քիչ մշակաբույսեր են դիմանում ցրտին, Ենոքը կարողացավ հաղթահարել դժվարությունները՝

կիրառելով արևային պանելներ, սածիլների մատակարարման շղթաներ և բացառիկ վճռականություն։ Նրա ֆեյսբուքյան խումբը՝ «Կարտոֆիլագործությունն Ախալքալաքում», այժմ միավորում է ավելի քան 5500 անդամի, որտեղ մարդիկ կիսվում են խորհուրդներով, գործիքներով և ոգևորությամբ։ Ենոքն ավելին է, քան գործարարը. նա խորհրդատու է, որը մարդկանց կոչ է անում ռիսկի դիմել և պլանավորել երկարաժամկետ հեռանկարով։ Թեև տեղական բյուրոկրատիան հաճախ խոչընդոտում է ֆորմալ բարեփոխումներին, նրա ոչ ֆորմալ թվային ցանցը դարձել է ավելի զորեղ փոփոխության շարժիչ ուժ. մի ուժ, որն արդեն վերափոխում է գյուղական համայնքների մտածելակերպը գյուղատնտեսության, ձեռներեցության և ինքնաբավության վերաբերյալ։

Պարույրն ու գյուղական խնդիրները: Հիվանդության պատճառով տանը գամված և թթվածնի սարքի օգնությամբ ապրող Պարույր Մադոյանը Facebook-ի միջոցով սկսել է փաստագրել Փոգա գյուղի անցուդարձը և այդպիսով դարձել փոփոխությունների հեղինակ։ Նրա էջը, որին հետևում է մոտ 2500 մարդ, համատեղում է պոեզիան, լուսանկարներն ու մեկնաբանությունները տեղական խնդիրների շուրջ՝ սկսած թափոնների կառավարումից մինչև թափառող շներ։ Առանց համակարգչի կամ ֆորմալ կրթության, Պարույրը գրում է, խմբագրում և հրապարակումներ անում է բջջային հեռախոսով՝ ստեղծելով հարթակ, որը կարող է մրցակցել շրջանային լրատվականների հետ։ Նրա գրառումների արդյունքում իրականացվել են մաքրման աշխատանքներ, դրամահավաքներ և խթանվել է քաղաքացիական ուշադրությունը մի համայնքում, որը վաղուց իրեն մոռացված էր զգում։ Չնայած այն բանին, որ սկզբնական շրջանում նրան հանդիմանում էին իր ազնվության համար, նա վաղուց արդեն վայելում է այն գյուղացիների հարգանքը, որոնք նրան ժամանակին կոչ էին անում լուռ մնալ։ Սա ապացույցն է այն բանի, որ նույնիսկ ամենամեկուսացված ձայները կարող են էական ազդեցություն ունենալ։

Հեշտիան և գյուղական հիմնադրամը: Հեշտիա գյուղում համավարակի ընթացքում ստեղծված փոքրիկ WhatsApp խումբը կարճ ժամանակում վերածվեց հզոր տեղական հիմնադրամի, որն արձագանքում է հրատապ կարիքներին՝ սկսած բժշկական ծախսերից մինչև ուսման վարձեր։ Դա հնարավոր է դարձել գյուղի բնակիչների և արտասահմանում ապրող սփյուռքահայերի ամսական նվիրատվությունների շնորհիվ։ «Do Good» նախաձեռնությունն այժմ ունի ավելի քան 1000 ակտիվ մասնակից և արդեն համաֆինանսավորել է ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, ջրամատակարարման համակարգերի բարելավում և անգամ հանրային մարզադաշտի կառուցումը։ Հեշտիան, որը եզակի հայկական կաթոլիկ համայնքի հայրենիքն է, ցույց է տալիս, թե ինչպես կարող է ժողովրդական բարեգործությունը միավորել հեռավոր ցանցերը և բերել շոշափելի արդյունքներ։ Արտագաղթից տուժած այս տարածաշրջանում հիմնադրամը վերականգնել է սոցիալական կապերը և սկիզբ դրել մի լուռ վերածննդի, որն առաջնորդվում է ոչ թե պետության, այլ՝ վստահության, նախաձեռնողականության և համայնքի հավատարիմ անդամների կողմից, որոնք իրականում երբեք չեն էլ լքել այն։

Կումուրդոն և դպրոցը, որը փոխեց ամեն ինչ։ Կումուրդո գյուղում անանուն նվիրատվությունը, որը լայնորեն կապում են տեղացի գործարար Հայկ Մգդեսյանի անվան հետ, փոխեց համայնքի ապագան։ Ավելի քան 4 միլիոն դոլար ներդրման շնորհիվ այստեղ կառուցվեց ժամանակակից դպրոց այն վայրում, որտեղ երեխաները նախկինում դասեր էին անցկացնում հրդեհից տուժած ավերակներում։ Նոր դպրոցը հագեցած է գիտական լաբորատորիաներով, լողավազանով և մարզահրապարակներով,

որոնք աննախադեպ են տարածաշրջանում։ Դպրոցի բացումից հետո Կումուրդոն նաև նոր մանկապարտեզներ, ասֆալտապատ ճանապարհներ և պետական կառույցներ է ստացել՝ ապացուցելով, որ մեկ մասնավորի մեծահոգի քայլը կարող է խթանել պետական ներդրումների հոսք։ Մգդեսյանի լուռ բարեգործությունը, որը բխում է իր գյուղի հետ ամբողջ կյանքում ունեցած կապից, Վրաստանում գյուղական զարգացման եզակի օրինակ է՝ ոչ միայն դպրոց, այլև ուղերձ այն մասին, թե ինչ է իրականում հնարավոր։

Հայկական հիմնադրամ և հիշողության թանգարաններ: Ջավախեթիի հետ սերտ կապեր ունեցող սփյուռքահայերի կողմից ստեղծված «Աջակցություն Ջավախեթիին» հիմնադրամը կարևոր օղակ է դարձել ժառանգության պահպանման և կրթության խթանման գործում սահմանամերձ մի շրջանում, որը հաճախ դուրս է մնում հիմնական աջակցության ծրագրերից։ Դրա ձեռքբերումներից առանձնանում են երկու պատմական տուն-թանգարանների վերականգնումը. մեկը նվիրված է 19-րդ դարի ժողովրդական երգիչ Ջիվանուն, մյուսը՝ 20-րդ դարի բանաստեղծ Վահան Տերյանին։ Նոր ցուցադրությունների, կայքերի և մշակութային ծրագրերի միջոցով, այդ թվում՝ հայ և վրացի պաշտոնյաների մասնակցությամբ համատեղ միջոցառումների կազմակերպմամբ, հիմնադրամը հիշողությունը վերածել է կենդանի և միավորող արժեքի։ Քանի որ ավանդական դրսից ֆինանսավորումը գնալով նվազում է, սփյուռքի կողմից առաջնորդվող և պետական կառույցների հետ համակարգված աշխատանքի այս մոդելը կարող է դառնալ տարածաշրջանում քաղաքացիական հասարակության կայուն գործունեության վերջին հուսալի ուղիներից մեկը։

Մեթոդաբանություն

Սույն ուսումնասիրությունը հիմնված է փաստաթղթային և դաշտային հետազոտությունների համադրության վրա, որոնք անցկացվել են 2025թ. ապրիլ-հուլիս ամիսներին: Ջավախեթիի պատմական և քաղաքական համատեքստը հասկանալու նպատակով, իրականացվել է գրականության համապարփակ ուսումնասիրություն՝ հիմնված գիտական աշխատությունների, քաղաքական վերլուծությունների, մամուլի հրապարակումների և այլ աղբյուրների վրա: Բացի այդ, հետազոտության շրջանակում Երևանում և Թբիլիսիում տարբեր շահագրգիռ կողմերի հետ անցկացվել են խորացված հարցազրույցներ՝ ինչպես առցանց, այնպես էլ անմիջական շփման ձևաչափով: Հետազոտական գործընթացում առանցքային նշանակություն են ունեցել Ջավախեթի կատարած այցերը, որոնց ընթացքում հեղինակը կիսակառուցվածքային հարցազրույցներ է վարել տեղացի ակտիվիստների, ներկա և նախկին պաշտոնյաների, ՀԿ-ների ներկայացուցիչների, լրագրողների և բնակիչների հետ: Այս հարցազրույցները արժեքավոր պատկերացում են տալիս տարածաշրջանի առօրյա իրականության, մարդկանց ընկալումների և առկա մարտահրավերների մասին:



I.
Ջավախեթիի փուչիկի առաջացումը

Շրջանի մեկուսացումը շարունակվել է տասնամյակների ընթացքում: Խորհրդային շրջանում Ջավախեթին գտնվում էր Թուրքիայի անմիջական հարևանությամբ՝ սահմանամերձ գոտում՝ ռազմավարական մի վայրում, որտեղ կար մշտական ռազմական ներկայություն: Խորհրդային ռազմաբազաները, որոնք ցրված էին տարբեր գյուղերում, իրենց սեփական կանոններն ու սահմանափակումներն էին տարածում տեղական կյանքի վրա: 50-ականների սկզբին, երբ Թուրքիան դարձավ ՆԱՏՕ-ի անդամ, Ջավախեթին հայտարարվեց փակ գոտի: Սովորական մարդիկ չէին կարող այնտեղ մուտք գործել առանց խորհրդային անվտանգության մարմինների հատուկ թույլտվության:[1]

Խորհրդային Միության փլուզումը փոփոխություններ բերեց, սակայն ոչ միասնականություն: Չնայած Ջավախեթիում գործող խմբերը երբեք անկախության չեն ձգտել, տեղի հայ բնակչությունը տարիների ընթացքում ավելի ու ավելի էր ձգտում դեպի հարևան Հայաստան:[2] Այս տեղաշարժը խթանվում էր ոչ միայն լեզվական և մշակութային սերտ կապերով, այլ նաև այդ ժամանակ Հայաստանում առկա հարաբերականորեն ավելի լավ տնտեսական պայմաններով:[3] Ի հակադրություն դրա՝ Վրաստանում ամենուր տիրում էին քաղաքացիական խռովություններ և մարտեր էին ընթանում երկու անջատողական շրջաններում: 1990-ականներին Ջավախեթիից զանգվածային արտագաղթ տեղի ունեցավ: Որոշ տվյալների համաձայն՝ շրջանի բնակչությունը կիսվեց՝ համեմատած խորհրդային շրջանի առավելագույն թվաքանակի հետ: Ըստ 2024թ. վերջին մարդահամարի՝ Ջավախեթիում բնակվում է մոտ 67,000 մարդ:[4]

	1989		2002		2024	
	Արական	Իգական	Արական	Իգական	Արական	Իգական
Ախալքալաքիի շրջան	69,3		45		43,7	
	33,7	35,6	22,1	22,1	21,6	22,1
Նինոծմինդայի շրջան	38,9		24,5		23	
	19,2	19,8	12,2	12,3	11,4	11,6

Աղբյուր՝ Վրաստանի վիճակագրության պետական գրասենյակ, Demoscope Weekly.

Թեպետ շրջանը բնակեցված է գլխավորապես հայերով, բնակիչները տարբերվում են Հայաստանի բնակչությունից: Նրանք խոսում են արևմտահայերենի բարբառներով, որոնք հիմնականում օգտագործվում են Մերձավոր Արևելքի, Ամերիկայի մայրցամաքների և Եվրոպայի որոշ հատվածներում բնակվող սփյուռքահայ համայնքներում, ովքեր այնտեղ հայտնվել են 20-րդ դարի սկզբի Ցեղասպանությունից հետո: Թեև Հայաստանի հայերի մեծ մասը հասկանում է այս բարբառները, դրանք չեն կիրառվում պաշտոնական հաղորդակցության, կրթության կամ զանգվածային լրատվամիջոցների մեջ:

Այնուամենայնիվ, լեզվական տարբերությունները չեն խանգարել Ջավախեթիի բնիկներին՝ ինտեգրվելու հայ հասարակության հետ այնտեղ տեղափոխվելուց հետո: Շատերը նույնիսկ հանրային պաշտոններ են զբաղեցնում, այդ թվում՝ բարձր

1 Միջազգային ճգնաժամային խումբ, "Georgia: The Javakheti Region's Integration Challenges", Europe Briefing No. 63, 23 May 2011.

2 Միջազգային ճգնաժամային խումբ, "Georgia's Armenian and Azeri Minorities", Europe Report No. 178, 22 November 2006.

3 Christian Beddies, Enrique Gelbard, Gevorg Sargsyan, and Davide Lombardo, "Armenia: The Road to Sustained Growth", International Monetary Fund, 2005.

4 2024թ.-ի մարդահամարի նախնական արդյունքների համար տե՛ս Վրաստանի վիճակագրության պետական գրասենյակի կայքէջը՝ https://census2024.geostat.ge/en/results

պաշտոններ Հայաստանի կառավարությունում, և ակտիվ են երկրի քաղաքական ու քաղաքացիական կյանքում: Մինչև 2010-ականները Հայաստանը շատ ուժեղ էր ձգում դեպի իրեն Ջավախեթիի երիտասարդներին: Այս միտումը սկսեց փոխվել միայն այն բանից հետո, երբ վրացական կառավարությունը ներդրեց մի շարք ինտեգրացիոն ծրագրեր, որոնք նպատակ ունեին շրջանի բնակչությունն ավելի շատ կապել Թբիլիսիի հետ:[5]

Այսօր Վրաստանի մայրաքաղաքը շատ ավելի գրավիչ է Ջավախեթիի երիտասարդների համար, քան Երևանը:[6] Վրացական համալսարաններ ընդունվելու համար պահանջվում է միայն հայերեն լեզվով հանձնել «Ընդհանուր հմտությունների» քննություն: Հաջողակների մեծ մասն այնուհետև մեկ տարի անվճար անցնում է վրացերենի դասընթաց՝ նախքան հիմնական ակադեմիական ծրագրում ընդգրկվելը: Շրջանավարտներն ավարտում են՝ ունենալով որակավորում և պետական լեզվի ազատ տիրապետում: Սա առավելություն է իրենց ծնողների սերնդի համեմատ, որոնք վրացերենի չիմացության պատճառով հաճախ դժվարանում են կողմնորոշվել պետական զբաղվածության բյուրոկրատիայում: Այս ծրագրերը խթանել են Ջավախեթիի երիտասարդների արտագաղթը դեպի Թբիլիսի: Նոր ավարտածները նաև հեշտացնում են վրացական ընկերությունների հետ բիզնես կապերը՝ օգնելով ընդլայնել տեղական արտադրանքի շուկան:



Աղբյուր՝ Վրաստանի ֆինանսների նախարարություն

Թեև այժմ տարածաշրջանի ավելի շատ էթնիկ հայեր են խոսում վրացերեն և ավարտել են վրացական ուսումնական հաստատություններ, այնուամենայնիվ, առօրյա խնդիրները լուծելու հարցում տեղական իշխանությունների հիմնական անկարողությունը մնում է անփոփոխ: Չնայած Ջավախեթիի երկու շրջանների բյուջեները վերջին տարիներին աճել են, վրացական օրենսդրությունը խիստ սահմանափակում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները: Համայնքները կարող են

5 Jonathan Wheatley, "The Integration of National Minorities in the Samtskhe-Javakheti and Kvemo Kartli Provinces of Georgia: Five Years into the Presidency of Mikheil Saakashvili", ECMI Working Paper #44, September 2009.

6 Ըստ Վրաստանի Հաշտեցման և քաղաքացիական հավասարության հարցերով պետական նախարարի գրասենյակի տվյալների՝ 2010-2018 թվականներին հատուկ արտոնություններով բուհ ընդունված ուսանողների թիվը գրեթե վեց անգամ աճել է: Տե՛ս «1+4 Ծրագիր», Հաշտեցման և քաղաքացիական հավասարության հարցերով պետական նախարարի գրասենյակ:

ֆինանսավորել ճանապարհների վերանորոգումը կամ հանրային լուսավորություն անցկացնել, սակայն նրանք անզոր են ճգնաժամերի պարագայում կամ հաճախ չեն կարողանում ազդել Թբիլիսիում մշակվող քաղաքականության վրա: Առանցքային որոշումները, օրինակ՝ կրթության ոլորտում, կայացվում են կենտրոնացված կարգով՝ Վրաստանի կրթության, գիտության և երիտասարդության հարցերի նախարարության կողմից:

Կենտրոնից այս գերկախվածությունը սնուցում է քաղաքական կոռուպցիան: Տեղական խնդիրների լուծմանը հասնելու համար պաշտոնյաները ստիպված են գործարքների մեջ մտնել կենտրոնական իշխանությունների հետ: Դրա դիմաց նրանցից ակնկալվում է, որ կապահովեն քաղաքական հավատարմություն: Այս փոխադարձ պայմանավորվածությունը ստեղծել է մի համակարգ, որտեղ Թբիլիսին իր ձեռքով է ընտրում տարածաշրջանային ազդեցիկ դեմքերի՝ մարդկանց, որոնք ունեն բավարար հարստություն կամ տոհմական կապեր՝ հնազանդությունն ապահովելու համար: Վրաստանի անվտանգության ծառայությունները և մյուս ուժային կառույցները ծառայում են որպես մայրաքաղաքի աչքերն ու ականջները՝ երաշխավորելով, որ կենտրոնի կամքը պարտադրվի ծայրամասերում:[7]

1. Քաղաքական ճահճացման արմատները

Ջավախեթին, սակայն, միշտ չէ, որ այսքան հնազանդ կամ հավատարիմ է եղել: Տարածաշրջանում հանրային ակտիվության բռնկումները, որպես կանոն, արձագանքել են Թբիլիսիի ավելի մեծ քաղաքական ցնցումներին: 1990-ականների սկզբին, երբ Վրաստանում իշխանության եկավ նոր՝ ազգայնական կառավարություն, Ջավախեթիի ակտիվիստները սկսեցին հնչեցնել իրենց ազգայնական կոչերը: Ոմանք պահանջում էին ավելի լայն ինքնավարություն, մինչդեռ մյուսներն ավելի հեռուն գնացին՝ կոչ անելով միավորվել հարևան Հայաստանի հետ:[8] Ժամանակի ընթացքում ակտիվության այս ալիքը մարեց՝ մեծամասամբ պայմանավորված իր սահմանին ևս մեկ հակամարտություն չբորբոքելու Երևանի դժկամությամբ: Հայաստանն արդեն իսկ ներքաշված էր Լեռնային Ղարաբաղի շուրջ պատերազմի մեջ Ադրբեջանի հետ և պատրաստ չէր իր մերձակայքում նոր անկայունության:

2000-ականների սկզբին տարածաշրջանում քաղաքական լարվածության նոր ալիք բարձրացավ, երբ Վրաստանի նոր ղեկավարությունը քայլեր ձեռնարկեց երկրի ծայրամասերի նկատմամբ խիստ վերահսկողություն հաստատելու ուղղությամբ: Թեև նմանատիպ բարեփոխումներ ընթանում էին ամբողջ երկրում, պետական ինստիտուտների համախմբման և կոռուպցիայի արմատախիլ անելու ձգտումը Ջավախեթիում ընդունվեց կասկածանքով: Շատ տեղացիներ դա դիտարկում էին որպես արտաքին իշխանություն պարտադրելու և, հնարավոր է, նույնիսկ իրենց նկատմամբ խտրականություն դրսևորելու փորձ:

Լարվածությունն է՛լ ավելի խորացավ 1999թ.-ին ԵԱՀԿ Ստամբուլի գագաթաժողովում

7 Social Justice Center, Elis Bakradze, Sopho Rostiashvili, Ani Isakadze, and Keti Chutlashvili, “Ethnic Minorities Under the Security Gaze: Practices of Control in Samtskhe-Javakheti and Dmanisi”, (Georgian), Tbilisi, 2025.

8 Միջազգային ճգնաժամային խումբ, “Georgia’s Armenian and Azeri Minorities”, Europe Report No. 178, 22 November 2006, էջ 16:

կայացած ռուս-վրացական այն համաձայնությունից հետո, որով նախատեսվում էր մինչև 2007 թվականը փակել Ախալքալաքիի ռազմաբազան: Տեղացիների համար սա դառը հարված էր: Ռազմաբազան հարյուրավոր աշխատատեղեր էր ապահովում և գումար ներարկում տարածաշրջանային տնտեսություն:[9] Արդյունքում տեղի ունեցան մի շարք լայնածավալ բողոքի ակցիաներ, որոնք փողոց դուրս բերեցին հազարավոր մարդկանց: Շարժման որոշ առաջնորդներ հետագայում ինտեգրվեցին քաղաքական համակարգին, մինչդեռ մյուսները կա՛մ լքեցին տարածաշրջանը, կա՛մ հրաժարվեցին իրենց գործունեությունից՝ ձերբակալությունների, ահաբեկման փորձերի կամ բանտարկության հետևանքով:



Աղբյուր՝ Վրաստանի ընտրությունների հացերով կենտրոնական վարչություն

Դրանից հետո Ջավախեթիի քաղաքական կյանքը մտել է տագնապալիորեն կանխատեսելի ռիթմի մեջ: Երբ անգամ ինչ-որ բան տեղի է ունենում, դա, որպես կանոն, սահմանափակվում է տեղական մակարդակով և հազվադեպ է գրավում մայրաքաղաքի ուշադրությունը: Վրաստանի ընդդիմադիր կուսակցությունները մեծամասամբ դուրս են գրել տարածաշրջանն իրենց հաշվարկներից:[10] Ջավախեթին դիտարկվում է որպես իշխող կուսակցությունից չափազանց կախյալ և որպես չափազանց բարդ տեղանք՝ քաղաքական հավատարիմ ցանցեր կառուցելու համար: Ըստ ընտրական դիտորդների՝ տարածաշրջանում քարոզարշավ անելը ֆինանսապես անմատչելի է ընդդիմության համար, որը նախընտրում է կենտրոնանալ ավելի հասանելի շրջանների վրա:[11]

Թվերն ինքնին խոսուն են: 2024թ.-ի խորհրդարանական ընտրություններին Ջավախեթիում քվեարկել է ընդամենը 57,000 ընտրող:[12] Իշխող «Վրացական երազանք» կուսակցությունը հաղթանակ է տարել գրեթե բոլոր տեղամասերում, սակայն ընդդիմությանը հաջողվեց փոխհատուցել այդ կորուստները՝ աջակցություն

9 Kornely Kakachia, “End of Russian Military Bases in Georgia: Social, Political and Security Implications of Withdrawal”, *Central Asia and the Caucasus* no. 2(50), 2008.

10 Salome Kandelaki, “Integration of Ethnic Minorities in Georgia: Barriers to Political Participation”, Policy Paper no. 16, August 2020.

11 “Opposition Passivity in the Regions: Causes, Prospects, and Participation in the Upcoming Elections”, Jnews.ge, *(Russian), 31 March 2025.*

12 2024թ.-ին ընտրողների վերաբերյալ տվյալների համար տես Կենտրոնական ընտրական հանձնաժողովի (ԿԸՀ) պաշտոնական կայքէջը:

ստանալով արտերկրում բնակվող վրացիների շրջանում:[13] «Իշխող ուժն այստեղ գրեթե տոտալ վերահսկողություն ունի», - բացատրում էր քվեարկությանը ներկա միջազգային դիտորդներից մեկը: «Նրանք անգամ արդյունքները կեղծելու կարիք չունեն: Ամեն ինչ բնականոն հունով է տեղի ունենում»:

Տարիներ շարունակ միակ բացառությունը «Միացյալ ազգային շարժումն» (ՄԱՇ) էր՝ հիմնադրված նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլիի կողմից: Անգամ իշխանությունը կորցնելուց հետո ՄԱՇ-ը պահպանում էր զգալի աջակցություն Ջավախեթիում: Շատ ընտրողներ հենց այդ կուսակցությանն էին վերագրում տեղական կյանքի շոշափելի բարելավումները. ճանապարհները ասֆալտապատվել էին, հասարակական կարգը վերականգնվել էր, նոր դպրոցներ էին կառուցվել: Սակայն բարյացակամության այս պաշարը գոլորշիացավ 2020 թվականին, երբ Սաակաշվիլին հրապարակավ սատարեց Ադրբեջանին Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի ժամանակ: Թեև աշխարհագրորեն հեռու, հակամարտությանը զոհ գնաց ավելի քան 5,000 հայ, այդ թվում՝ Ջավախեթիից սերող բազմաթիվ երիտասարդներ: Այդ տարվա ընտրություններում ՄԱՇ-ը տարածաշրջանում ստացավ ձայների չնչին մասը միայն: Նրա տեղական առաջնորդներն այդպես էլ չվերականգնվեցին:

2. Քաղաքացիական հասարակությունը՝ հիմնված տեղական իրականությունների վրա

Վերջին տասնամյակում Ջավախեթիում իրենց համայնքների կյանքը բարելավել ձգտողների համար քաղաքացիական հասարակությունը դարձել է պետական հատվածում աշխատանքի տեղավորման միակ իրական այլընտրանքը: Այս ոլորտը հետևողականորեն ընդլայնվել է Եվրամիության, նրա անդամ պետությունների և Վրաստանի՝ ԵՄ-ին ավելի լայն ինտեգրման հետ կապված արևմտյան ֆինանսավորմամբ մի շարք նախաձեռնությունների աջակցությամբ: Այս ծրագրերի շրջանակում վերապատրաստումներ են անցկացվել տեղական պաշտոնյաների, լրագրողների և ՀԿ-ների աշխատակիցների համար՝ միաժամանակ մեկնարկելով գյուղատնտեսական զարգացման նախագծեր, ինչը տրամաբանական ուղղություն է մի տարածաշրջանում, որտեղ գյուղատնտեսությունը մնում է ապրուստի հիմնական միջոցը: Այլ ջանքեր ուղղված են եղել երիտասարդների ներգրավմանը՝ նպաստելով երիտասարդ ակտիվիստների վերապատրաստմանը և տեղական որոշումների կայացման գործընթացում նրանց ընդգրկմանը:

Տեղական իշխանությունները, ընդհանուր առմամբ, բաց են եղել համագործակցության համար՝ պայմանով, որ քաղաքացիական հասարակության գործունեությունը չի հակասում ազգային կամ անմիջական քաղաքական շահերի վերաբերյալ իրենց ընկալումներին: Ինչպես բացատրեց համայնքային պաշտոնյաներից մեկը՝ արտահայտելով լայնորեն տարածված տեսակետ. «Եթե դուք քաղաքականությունից հեռու մնաք, մենք միշտ բաց կլինենք համագործակցության համար»:

13 Միտումների մասին ավելին իմանալու համար, տե՛ս՝ Fagan Abbasov, “Political Engagement and Electoral Behavior of Ethnic Minorities”, Institute for Development of Freedom of Information (IDFI), 13 September 2024:

Վրաստանի կառավարության՝ եվրոպական ինտեգրման իր ուղուց հրաժարվելու որոշումն այժմ սպառնում է կտրուկ սահմանափակել կամ նույնիսկ վերացնել տեղական ՀԿ-ների գործունեությունը: Ջավախեթիի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մեծ մասը գրանցվել է 2024 թվականին ընդունված «օտարերկրյա գործակալների» մասին օրենքով և պատրաստվում է դա կրկին անել 2025 թվականին ընդունված էլ ավելի խիստ օրենսդրության համաձայն:[14] Մի քանիսն արդեն ամբողջությամբ փակվել են: Մյուսները դեռ շարունակում են գործել, բայց մտավախություն ունեն, որ իրենց աշխատանքը շուտով կարող է ավարտվել՝ եթե ոչ պետական ճնշումների, ապա քաղաքացիական հասարակության ֆինանսավորման կտրուկ անկման պատճառով:

Չնայած այս խոչընդոտներին, Ջավախեթիում քաղաքացիական հասարակության դերակատարների և տեղական իշխանությունների միջև կապերը շարունակում են գոյություն ունենալ, թեև փխրուն վիճակում: Պատմականորեն, ամենաարդյունավետ մոդելը եղել է գործնական համագործակցությունն՝ ընդհանուր շահերի շուրջ: Օրինակ, որոշ ՀԿ-ներ հաջողությամբ լոբբինգ են արել հանրային տրանսպորտի նոր երթուղիների համար՝ ուղղակիորեն բանակցելով համայնքային պաշտոնյաների հետ: Թեև Թբիլիսիում և Վրաստանի այլ շրջաններում իրենց գործընկերների և իշխանությունների միջև հաղորդակցությունն ամբողջությամբ խզվել է, Ջավախեթիում որոշ գործնական կապեր պահպանվում են: «Մենք շատ քիչ ենք, և բոլորս միմյանց չափազանց լավ ենք ճանաչում», - բացատրեց տեղացի ակտիվիստներից մեկը: «Նույնիսկ եթե իշխանության ես, միևնույն է, երեխաներդ այստեղ են մեծանում: Միևնույն է, հոգ ես տանում նրանց կյանքն ավելի լավը դարձնելու մասին»:

Միևնույն ժամանակ, ակտիվիստների նոր սերունդը, որը կրթություն է ստացել վրացական լավագույն համալսարաններում և տիրապետում է պետական լեզվին, սկսում է վերափոխել տարածաշրջանի քաղաքացիական դաշտը: Թեև Ջավախեթիում հանրային բողոքի ակցիաները հազվադեպ են, շրջանից շատ երիտասարդներ միացել են մայրաքաղաքում տեղի ունեցող ցույցերին՝ բացահայտ կիսվելով իրենց տեսակետներով սոցիալական ցանցերում և խոսելով լրագրողների հետ: «Այս սերունդը չի բավարարվելու նոր ասֆալտապատ ճանապարհով կամ աշխատող ջրատարով», - ասել է տեղական ՀԿ-ի մի ներկայացուցիչ: «Նրանք զգացել են ազատության համը»:

14 “How many organizations are registered in the foreign agents registry”, *Jnews.ge*, (Russian), 10 December 2024.

II.
Ժողովրդական նախաձեռնություններ

Ձավախեթիի նման բարդ տարածաշրջանում քաղաքացիական ակտիվության գոնե նվազագույն մակարդակը պահպանելու ուղիներից մեկը կարող է լինել ժողովրդական նախաձեռնություններին աջակցելը։ Այս մոտեցումը տարածում է գտել դեպի ավտորիտարիզմ շարժվող երկրներում, որտեղ քաղաքացիական հասարակության ֆորմալ գործունեությունը գնալով սահմանափակվում է։ Ռուսաստանում այն հայտնի է դարձել որպես «փոքր գործերի տեսություն»՝ գաղափար, որը ընկած է քաղաքական և սոցիալական սահմանափակումների պայմաններում օգտակար մնալու ձգտման հիմքում։[15] Մոտ 15 տարի առաջ այն կամավորության նոր ալիքի սկիզբ դրեց։ Այս տեսության անալոգները կարելի է գտնել աշխարհի այլ մասերում, ինչպես նաև գիտական աշխատություններում, որոնք ուսումնասիրում են դիմադրությունը՝ հանուն ընդհանուր բարօրության կամ համայնքային շահերի իրականացվող հավաքական, հաճախ ապաքաղաքական գործողությունների միջոցով։[16]

Ձավախեթիում ներքևից վերև ուղղված նման ջանքերը հազվադեպ են բախվում տեղական կամ կենտրոնական իշխանությունների դիմադրությանը՝ հենց այն պատճառով, որ դրանք զուրկ են բացահայտ քաղաքական երանգներից։ Այս նախաձեռնությունները հակված են կենտրոնանալու կրթության, առօրյա կյանքի բարելավման կամ հանրային նշանակության ոլորտներում գիտելիքների և հմտությունների փոխանակման վրա։ Մինչ օրս լուրջ փորձ չի արվել այս ջանքերը որակելու որպես ակտիվիզմ, էլ չասած՝ որպես քաղաքական ստատուս քվոյի հնարավոր մարտահրավեր։

Արտաքին աջակցությունը կարող է կենտրոնանալ մասնակիցներին օգնելու վրա՝ կապեր հաստատելու Վրաստանի կամ արտերկրի ավելի լայն քաղաքացիական ցանցերի հետ՝ հնարավորություն տալով փորձի փոխանակման, փոխադարձ ուսուցման և համերաշխության համար։ Աջակցության մեկ այլ ձև կարող է լինել պարզապես նման ջանքերի արժեքի ճանաչումը։

Ներկայումս այս ժողովրդական նախաձեռնություններն են, որ, հավանաբար, Ձավախեթիում գոյատևելու և զարգանալու լավագույն հեռանկարներն ունեն։ Կարևոր է, որ տեղացիները դրանք չեն ընկալում որպես դրսից պարտադրված քայլեր։ Ընդհակառակը, դրանք մշակվում, իրականացվում և ղեկավարվում են շրջանի բնակիչների կամ այնտեղ ծնվածների կողմից՝ ուղղված իրենց իսկ համայնքների բարելավմանը։

Այս նախաձեռնություններին աջակցությունը պարտադիր չէ, որ դրամական լինի։ Դրանց մեծ մասն իրականացվում է անձնական միջոցներով կամ կամավորական ջանքերով։ Այս առումով, արտաքին աջակցությունը կարող է կենտրոնանալ մասնակիցներին օգնելու վրա՝ կապեր հաստատելու Վրաստանի կամ արտերկրի ավելի լայն քաղաքացիական ցանցերի հետ՝ հնարավորություն տալով փորձի փոխանակման, փոխադարձ ուսուցման և համերաշխության համար։ Աջակցության մեկ այլ ձև կարող է լինել պարզապես նման ջանքերի արժեքի ճանաչումը։ Տեղական այս նախաձեռնությունները, որքան էլ

15 Nikulin, A. M., and E. S. Nikulina, “Theory of ‘Small Deeds’ as a Populist Practice of the Middle Class”, *RUDN Journal of Sociology* 24, no. 3 (2024), pages 848–855.

16 Օրինակ,տե՛ս՝ Ted Robert Gurr, *Why Men Rebel,* Princeton, NJ: Princeton University Press, 1970։

համեստ թվան, կենսական նշանակություն ունեն համայնքային ներգրավվածությունը պահպանելու և, հետևաբար, այլապես մեկուսացված տարածաշրջանում սոցիալական ազատության որոշակի չափաբաժին պահպանելու համար։

Ստորև ներկայացված է հաջողված նախաձեռնությունների մի ընտրանի՝ տարբեր իրենց մասշտաբով, ուղղվածությամբ և ազդեցությամբ։ Միասին դրանք թույլ են տալիս պատկերացում կազմել, թե ինչն է հնարավոր, և մատնանշում են աջակցության հնարավոր ուղիներ մի տարածաշրջանում, որը չափազանց հաճախ դուրս է մնում ուշադրությունից։

1. Գյուլնարան և կանանց առողջությունը

Միայն հիսունն անց Գյուլնարա Էլիզբարյանը բացահայտեց իր իրական կոչումը՝ ժողովրդական ակտիվիզմ՝ ի պաշտպանություն կանանց իրավունքների իր հայրենի Ջավախեթիում։ Մոտ հինգ տարի առաջ մի խումբ կանայք այցելեցին նրա գյուղ՝ Կարտիկամ։ Լուր տարածվեց, որ այդ արտասովոր հյուրերը նորից են գալու։ Գյուլնարան խնդրեց հարազատներին պարզել հաջորդ հանդիպման ժամն ու վայրը։ Մեկ տարվա ընթացքում նա դարձավ շրջիկ կանանց խմբերի անփոխարինելի անդամ, որոնք այժմ շրջում են տարածաշրջանի գյուղական համայնքներով։

Թիկնեղ, կոկիկ սանրվածքով և հազվադեպ մարող ժպիտով Գյուլնարան կարողանում է ակնթարթորեն շահել մարդկանց վստահությունը։ Նրա պատմությունը բնորոշ է Ջավախեթիի շատ կանանց. նա ամուսնացել է դպրոցն ավարտելուց անմիջապես հետո և միայնակ է մեծացրել երեխաներին, մինչ ամուսինը տարվա մեծ մասն անցկացնում էր արտերկրում՝ սեզոնային աշխատանք կատարելիս։ «Ես միշտ ավելի խորը նպատակ եմ փնտրել», - ասում է նա։ «Հիմա հասկանում եմ. ես ապրում եմ, որպեսզի օգնեմ այլ կանանց՝ խուսափելու իմ ճակատագրից»։

Վերջին հինգ տարիներին Գյուլնարան դարձել է կանանց աճող տարածաշրջանային ցանցի մի մասը, որոնք պարբերաբար հանդիպում են՝ համագործակցելու փոքր նախագծերի շուրջ (որոշները՝ խմբային, որոշները՝ անհատական) և երբեմն հաջողությամբ իրենց համայնքներում շոշափելի բարելավումների են հասնում։ Նրանց աշխատանքի մեծ մասը կամավորական է։ Նրանք փոքր գումարներ են հավաքում՝ հանգստյան օրերին հավաքույթներ կազմակերպելու համար. սա հնարավորություն է պարելու, հանգստանալու և անձնական խնդիրների մասին անկեղծորեն խոսելու համար։ Սկզբնական շրջանի որոշ նախագծեր աջակցություն են ստացել օտարերկրյա դեսպանատներից և միջազգային կազմակերպություններից, ինչն օգնել է մոտակա գյուղերի մի քանի կանանց սկսել միկրոբիզնես՝ իրենց կյանքի առաջին աշխատանքը։

> Իրենց աշխատանքի ազդեցությունը ցույց տալու համար Գյուլնարան նշում է, որ տարածաշրջանի համար օգտակար կլինեն առողջապահության, կրթության, բիզնեսի կամ այլ կարևոր ոլորտների մասնագետների կանոնավոր այցելությունները։

Բայց Գյուլնարայի համար ամենակարևորը դեպի գյուղեր կատարվող այցերն են, որտեղ կանայք

հանդիպում են ուրիշների հետ՝ անվտանգ, մտերմիկ միջավայրում վերարտադրողական առողջության մասին խոսելու համար, ինչն այս պահպանողական հասարակությունում տաբու թեմա է: «Մենք, օրինակ, բացատրում ենք, որ կանայք պետք է ամուսիններին խնդրեն թեստ հանձնել՝ նախքան սեռական հարաբերությունները վերսկսելը, երբ տղամարդիկ ամիսներով բացակայել են սեզոնային աշխատանքի պատճառով», - ասում է Գյուլնարան: Տարածաշրջանում գրանցվել են ՄԻԱՎ-ի և սեռական ճանապարհով փոխանցվող այլ վարակների դեպքեր՝ թեմաներ, որոնք հազվադեպ են քննարկվում, եթե ընդհանրապես քննարկվում են: «Մեր մշակույթում նույնիսկ մայրերն ու դուստրերն այս մասին չեն խոսում: Բայց մենք պարտավոր ենք խոսել»:

Երբ Գյուլնարան իմացավ, որ Վրաստանի նոր օրենքները կարող են արգելել կամ խստորեն սահմանափակել ապագա քաղաքացիական նախագծերը, սթրեսից սրտի կաթված ստացավ: Նա մեկ շաբաթից ավելի անցկացրեց Թբիլիսիի հիվանդանոցում՝ բժիշկների հսկողության տակ: Դեպքն այնքան տպավորեց նրա գործընկեր ակտիվիստներին, որ նրանք որոշեցին ամեն գնով շարունակել: Այս ամառ նրանք տեղական նախաձեռնություն սկսեցին՝ վերամշակման համար պլաստիկ շշեր հավաքելու և հասույթն օգտագործելու՝ ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար սնունդ և առաջին անհրաժեշտության պարագաներ գնելու նպատակով: Նրանք նաև Գյուլնարայի գյուղում բացեցին վրացերենի մշտական դասընթաց, որին այժմ հաճախում են տարբեր տարիքի կանայք, այդ թվում՝ ինքը՝ Գյուլնարան:

Այս թափը պահպանելու համար Գյուլնարան կարծում է, որ անհրաժեշտ է շարունակել աջակցել իրենց գործունեությանը, նույնիսկ եթե այն պետք է մնա կամավորական տեսքով: Իրենց աշխատանքի ազդեցությունը ցույց տալու համար նա նշում է, որ տարածաշրջանի համար օգտակար կլինեն առողջապահության, կրթության, բիզնեսի կամ այլ կարևոր ոլորտների մասնագետների կանոնավոր այցելությունները: «Մեզ անհրաժեշտ են սեմինարներ և փորձի փոխանակում», - ասում է նա: «Մենք տանը նստողը չենք: Պետք է շարունակենք ներգրավել նոր կանանց և նույնիսկ աղջիկների. շուտով նրանց նույնպես պետք կգա այս գիտելիքը»:

2. Լիդան և գրքի ակումբը

Ջավախեթիի մեկ այլ անկյունում տեղացիները գտել են կանանց իրավունքների և ազատության ու արդարության ավելի լայն հարցերի շուրջ զրույցներ սկսելու այլընտրանքային միջոց: Վերջին մի քանի ամիսներին Օրջա գյուղում գործում է գրքի ակումբ: Նրա անդամների թվում են տեղի՝ տարածաշրջանում միակ ավագ դպրոցի աշակերտները, ինչպես նաև մի քանի շրջանավարտներ: Արտաքին աջակցությամբ նրանք միջոցներ են հայթայթել՝ հայերեն և վրացերեն նոր գրքեր գնելու համար, մեկնել են Երևան և Թբիլիսի՝ դրանք ձեռք բերելու, ստեղծել են WhatsApp-խումբ և այժմ պարբերաբար հանդիպում են՝ քննարկելու իրենց ընթերցանությունից ծնված գաղափարները:

Մեկ այլ առաջնահերթություն է ակումբի աշխարհագրության ընդլայնումը գյուղից դուրս, ցանկալի է՝ նաև տարածաշրջանից դուրս: Դա կպահանջի կապ հաստատել արտաքին հյուրերի հետ, ովքեր կարող են միանալ քննարկումներին և նոր տեսակետներ առաջարկել:

Առանց արտաքին աջակցության դա դժվար կլինի կազմակերպել։ Սակայն նույնիսկ համեստ օգնությունը, ինչպիսին է Թբիլիսիում կամ Հարավային Կովկասի այլ վայրերում մասնագետների հետ ծանոթությունների հաստատումը, կարող է էական եղանակ փոխել։

Ակումբի հիմնադիրներից է Լիդա Ալմասյանը, որն իր ժամանակը բաշխում է Թբիլիսիի և հայրենի գյուղի միջև։ Ընկերների հետ նա մանրամասն ընտրել է գրքեր, որոնք շոշափում են կյանքի իմաստի, անձնական ազատության և այլ փիլիսոփայական թեմաներ։ «Ես միշտ երազել եմ, որ մեր գյուղի երեխաները մեզանից տարբերվող մեծանան», - ասում է նա։ «Որ նրանք իրենց մեջ կրեն բարություն և սեր, այլ ոչ թե այն ագրեսիան, որի ականատեսը ես հաճախ եմ եղել տղամարդկանց կողմից մանկությանս տարիներին»։

Որոշ քննարկումների մասնակցում են հյուրեր այլ քաղաքներից։ Այս հանդիպումները չեն սահմանափակվում միայն գրքերով. մասնակիցներն անդրադառնում են ազգային և համաշխարհային իրադարձություններին՝ կապեր հաստատելով գաղափարների և իրականության միջև։ Ըստ Լիդայի՝ նպատակը քննադատական մտածողության զարգացումն է, ինչը դպրոցները հաճախ չեն սովորեցնում։ «Մենք ուզում ենք, որ նրանք հասկանան, թե ինչպես է ամեն ինչ փոխկապակցված», - ասում է նա։

Գյուղն ըստ էության գրադարան ունի, բայց քչերը գիտեն, թե երբ է այն բացվում կամ ինչ գրքեր կան այնտեղ։ Ձմռանն ակումբն իր գործունությունը տեղափոխում է առցանց հարթակ, քանի որ անդամները վարձակալելու համար փակ տարածք չունեն։ Տաք ամիսներին նրանք հավաքվում են դրսում, հաճախ՝ գյուղի մոտ գտնվող տաղավարում, որտեղ խնջույքներ են կազմակերպվում։

Քանի որ ակումբը գործում է կամավորական հիմունքներով, նրա անդամներն ավելի քիչ են անհանգստանում Վրաստանի նոր սահմանափակող օրենքների պատճառով հնարավոր փակման մասին։ Նրանց, սակայն, անհանգստացնում է իրենց փոքր գրքերի հավաքածուն թարմացնելու մարտահրավերը։ Վերջերս խումբը որոշեց ներդնել համեստ անդամավճար՝ մոտ մեկ դոլար՝ մեկ գրքի համար։ Թեև սա կարող է օգնել թեթևացնել ֆինանսական բեռը, այսպիսի դրամահավաքը ժամանակ կպահանջի։

Մեկ այլ առաջնահերթություն է ակումբի աշխարհագրության ընդլայնումը գյուղից դուրս, ցանկալի է՝ նաև տարածաշրջանից դուրս։ Դա կպահանջի կապ հաստատել արտաքին հյուրերի հետ, ովքեր կարող են միանալ քննարկումներին և նոր տեսակետներ առաջարկել։ Առանց արտաքին աջակցության դա դժվար կլինի կազմակերպել։ Սակայն նույնիսկ համեստ օգնությունը, ինչպիսին է Թբիլիսիում կամ Հարավային Կովկասի այլ վայրերում մասնագետների հետ ծանոթությունների հաստատումը, կարող է էական եղանակ փոխել։

3. Ենոքն ու ֆերմերները

Որոշ տեղացի գործիչներ փորձում են փոխել կյանքը Ջավախեթիում սոցիալական ցանցերի միջոցով: Ենոք Բաբաջանյանը նրանցից ամենահաջողակներից մեկն է: Նա վարում է շրջանի ամենահայտնի ֆեյսբուքյան խումբը՝ «Կարտոֆիլագործությունն Ախալքալաքում», որն ունի ավելի քան 5500 անդամ: Այնտեղ նա կիսվում է որոշակի մշակաբույսերի մշակման վերաբերյալ խորհուրդներով, խթանում է ջերմոցային տնտեսությունը և գովազդում վաճառքի ենթակա մթերքները: Խումբը նաև ներկայացնում է օգտագործված գյուղտեխնիկայի և գյուղատնտեսությանը վերաբերող այլ բովանդակության հայտարարություններ: Այս առցանց համայնքի շնորհիվ Ենոքը դարձել է տարածաշրջանի գյուղատնտեսության ամենանշանավոր նորարարը:

Ենոքը կարծում է, որ գյուղատնտեսական նորարարություններին խոչընդոտող շատ արգելքներ ինստիտուցիոնալ են: Նա կարծում է, որ իր ֆեյսբուքյան խումբը փոփոխությունների ավելի արդյունավետ գործիք է: Այն օգնել է նրան գտնել նոր կապեր և, երբեմն, ստեղծագործական լուծումներ՝ այլապես անլուծելի թվացող խնդիրների համար:

Նրա ճանապարհը դեպի գյուղատնտեսություն ոչ թե փառասիրության, այլ անհրաժեշտության արդյունք էր: Մի քանի տարի առաջ աշխատանքը կորցնելուց հետո Ենոքը որոշեց իրականացնել վաղեմի երազանքը՝ կառուցել ջերմոցային տնտեսություն: Դա չափազանց ռիսկային ձեռնարկ էր այս ցուրտ, լեռնային շրջանում: Տարիներ առաջ նա համալսարանական թեզ էր պաշտպանել այդ թեմայով: Նա հաշվարկեց մոտավոր մեկնարկային ծախսերը և սկսեց ձեռքով կառուցել իր առաջին ջերմոցը: Մոտավորապես այդ ժամանակ նա հանդիպեց ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ծրագրի ներկայացուցիչների հետ, որոնք նրան կոչ արեցին դիմել անհատ ֆերմերների համար նախատեսված դրամաշնորհային մրցույթին: Ենոքը ոչ միայն աջակցություն ստացավ իր սեփական նախագծի համար, այլև հրավիրվեց միանալու տարածաշրջանային գյուղատնտեսական զարգացման հանձնաժողովին: Սա հանգեցրեց հանդիպումների և համաժողովների հետագա հրավերների, որոնց արդյունքում նա ստեղծեց համախոհ ֆերմերների ցանց՝ թե՛ Վրաստանում, թե՛ արտերկրում:

Այսօր Ենոքը զգալի գործունեություն է ծավալում: Մուրջեթի գյուղում գտնվող իր տան կողքին կան երկու մեծ ջերմոցներ, որտեղ նա մշակում է լոլիկ, վարունգ, կանաչեղեն և այլ բանջարեղեն՝ մթերքներ, որոնք սովորաբար չեն հասունանում տարածաշրջանում, նույնիսկ ջերմոցային պայմաններում: Հողից բերք ստանալու համար Ենոքը տեղադրել է արևային մարտկոցներ՝ հողն ու օդը տաքացնելու համար: Նա նաև ստեղծել է տնկիների մատակարարման շղթա Վրաստանի այլ մասերից, որտեղ ամառն ավելի շուտ է գալիս, քան Ջավախեթիում: Նույնիսկ մեծ սկզբնական ծախսերից հետո՝ նրա ձեռնարկությունը շահութաբեր է դարձել: «Իմ արտադրանքն ավելի արագ է սպառվում, քան ես հասցնում եմ դրա մասին գրառում անել խմբում», - ասում է նա: Նրա խրթխրթան վարունգն ու հասուն լոլիկը մեծ պահանջարկ ունեն, որոնք գնվում են ինչպես անհատ հաճախորդների, այնպես էլ տեղական խանութների կողմից: «Երբեք չի բավականացնում»:

Ենոքի հաջողությունը լայն ուշադրություն է գրավել: Վերջին երկու տարիների ընթացքում նրա տնտեսություն է գալիս մարդկանց անընդհատ հոսք, որոնցից ոմանք արդեն կառուցել են իրենց սեփական ջերմոցները: Նա այժմ պարբերաբար խորհուրդներ է տալիս ոմանց: «Ամենամեծ խոչընդոտը փողը չէ», - ասում է նա: «Այն նոր բան փորձելու վախն է»: Նրա փորձից ելնելով՝ սկսնակ ֆերմերների մեծ մասը չունի հմտություններ և վստահություն՝ սկսելու այնպիսի բիզնես, որն անմիջապես եկամուտ չի բերի: «Ես փորձում եմ նրանց վարակել այս գաղափարով», - կատակում է նա: «Բայց դա միշտ չէ, որ ստացվում է: Մեզ անհրաժեշտ են ավելի շատ հաջողության պատմություններ, որպեսզի մարդիկ համարձակություն ձեռք բերեն փորձելու»:

Նա կարծում է, որ գյուղատնտեսական նորարարություններին խոչընդոտող շատ արգելքներ ինստիտուցիոնալ են: Ենոքը և այլ ֆերմերներ հանդիպումներ են ունեցել տեղական պաշտոնյաների հետ՝ բարեփոխումներ առաջ մղելու համար, սակայն նման ջանքերը հազվադեպ են պտուղ տալիս: Պաշտոնյաները հակված են ենթարկվելու վերադաս մարմիններին՝ հեռավոր գրասենյակներում գտնվող անդեմ պաշտոնյաների, որոնք մեծ հաշվով անհասանելի մնում են: Ենոքը կարծում է, որ իր ֆեյսբուքյան խումբը փոփոխությունների ավելի արդյունավետ գործիք է: Այն օգնել է նրան գտնել նոր կապեր և, երբեմն, ստեղծագործական լուծումներ՝ այլապես անլուծելի թվացող խնդիրների համար:

4. Պարույրը և գյուղական խնդիրները

49 տարեկանում Պարույր Մադոյանը փորձում է փոխել կյանքը իր հայրենի Փոկա գյուղում: Մոտ հինգ տարի առաջ, ծանր հիվանդությունից հետո, որը նրան կախվածության մեջ դրեց թթվածնային սարքից, նա ստիպված էր ժամանակի մեծ մասը մնալ տանը: Կապը պահպանելու համար նա ստեղծեց ֆեյսբուքյան էջ: Այնտեղ նա սկսեց հրապարակել բանաստեղծություններ, լուսանկարներ և համագյուղացիների մասին հիշողություններ, որոնցից ոմանք արտագաղթել էին, մյուսները՝ մահացել: Ժամանակի ընթացքում նրա գրառումները սկսեցին ներառել տեղական խնդիրների վերաբերյալ մեկնաբանություններ և դրանք լուծելու կոչեր: Փոկա գյուղի մասին նրա էջը գրեթե 2500 մշտական հետևորդ ունի և իր հայտնիությամբ մրցակցում է բազմաթիվ տարածաշրջանային լրատվամիջոցների հետ:

Իր բլոգի միջոցով Պարույրն արդեն հասցրել է շոշափելի փոփոխությունների հասնել: Օրինակ՝ մի քանի տարի առաջ գլխավոր ճանապարհի երկայնքով կուտակված աղբի մասին նրա գրառումները ստիպեցին տեղական իշխանություններին մաքրման աշխատանքներ կազմակերպել: Մեկ այլ դեպքում նա հաջող դրամահավաք սկսեց՝ աջակցելու Լեռնային Ղարաբաղի 2020 թվականի պատերազմում զոհված վեց տեղացի երիտասարդների ընտանիքներին, ովքեր տեղափոխվել էին Հայաստան: Ներկայումս նա արշավ է իրականացնում՝ լուծելու թափառող շների խնդիրը, որոնք հարձակվում են գյուղի ծայրամասում գտնվող թռչունների և անասունների վրա:

Պարույրը եզակի կերպար է տարածաշրջանում. ակտիվիստ, որը խնդիրներ է լուծում առցանց պատմություններ պատմելու: Թեև Փոկան Ջավախեթիի ամենամեծ գյուղերից մեկն է, այն գտնվում է տարածաշրջանի գլխավոր քաղաքներից հեռու: Բնակիչները

հաճախ իրենց մեկուսացված են զգում աշխարհից։ Այնուամենայնիվ, Պարույրն ասում է, որ քչերն են պատրաստ բարձրաձայնելու խնդիրների մասին։ Երբ նա նոր էր սկսել ֆեյսբուքում բողոքներ հրապարակել, նույնիսկ իր ընտանիքն էր հորդորում դադարեցնել՝ «հանրային բողոքներով տունը խայտառակ անելը»։ Բայց որքան նա համառում էր, այնքան ավելի շատ արձագանքներ էր ստանում։ Եվ երբ նրա ջանքերը սկսեցին արդյունք տալ, նրա ընտանիքը, և նույնիսկ թերահավատ հարևանները, սկսեցին հավատալ, որ սոցիալական մեդիան իսկապես կարող է փոփոխություն բերել։

Պարույրը լիովին ինքնուս է։ Նա համակարգիչ չունի. նրա բոլոր գրառումները գրվում և հրապարակվում են բջջային հեռախոսից։ Թեև տնից դուրս չի գալիս, Պարույրը մնում է գյուղական կյանքի կենտրոնական հանգույցը։ Նա տեղյակ է Փոկայում տեղի ունեցող ամեն ինչի մասին։

Պարույրը լիովին ինքնուս է։ Նա համակարգիչ չունի. նրա բոլոր գրառումները գրվում և հրապարակվում են բջջային հեռախոսից։ Դրանով նա ինքնուրույն սովորել է լուսանկարներ խմբագրել և պարզ տեսանյութեր պատրաստել։ Հենց այնտեղ էլ նա գրում է իր բանաստեղծություններն ու պատմվածքները։ Նրա ստեղծագործություններից մի քանիսն այնքան հայտնի են դարձել, որ երգերի են վերածվել։ Տեղացիները հաճախ նրան ուղարկում են լուսանկարներ, տեսանյութեր և հնարավոր թեմաների վերաբերյալ տեղեկություններ։ Թեև տնից դուրս չի գալիս, Պարույրը մնում է գյուղական կյանքի կենտրոնական հանգույցը։ Նա տեղյակ է Փոկայում տեղի ունեցող ամեն ինչի մասին։

5. Հեշտիան և գյուղական հիմնադրամը

Ջավախեթիի խոշոր գյուղերից մեկում բնակիչները որոշել են չսպասել դրսի օգնությանը։ Փոխարենը, նրանք ստեղծել են տեղական աջակցության հիմնադրամ՝ իրենց համայնքի կարիքները հոգալու համար։ COVID-19 համավարակի ժամանակ տեղացիների մի խումբ ստեղծեց WhatsApp խումբ՝ տարեցների և ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար մթերք գնելու նպատակով նվիրատվությունները համակարգելու համար։[17] Խումբը շարունակեց ակտիվ մնալ նույնիսկ ճգնաժամի մեղմացումից հետո և շուտով սկսեց ներգրավել ոչ միայն գյուղում դեռևս ապրողներին, այլև Եվրոպայում և դրանից դուրս սփռված արտագաղթածներին։ Այն, ինչ սկսվեց որպես միանվագ քայլ, վերածվեց ամենամսյա ավանդույթի. յուրաքանչյուր մասնակից այժմ կանոնավոր կերպով նվիրատվություններ է կատարում հիմնադրամին, որն օգտագործվում է տեղական մի շարք կարիքներ հոգալու համար։

Այսօր *«Do good» [«Բարիք գործիր»]* անվանումով WhatsApp-խումբն ունի ավելի քան 1000 ակտիվ անդամ։ Հավաքված գումարը ծախսվում է թանկարժեք բժշկական բուժումների, անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձերի և այլ բաների վրա։ Մի քանի անգամ հիմնադրամն այնքան զգալի գումարներ է հավաքել, որ գյուղացիները կարողացել են դիմել տեղական իշխանություններին համաֆինանսավորման առաջարկներով,

17 Anait Zalalyan, *"Do Good for Heshtia" — Charity Campaign"*, Radio NOR, 19 February 2018.

Այս ժողովրդական ջանքերն օգնում են ամրապնդել սոցիալական կապերը: Գյուղացիները միասին լուծում են այնպիսի խնդիրներ, որոնք դժվար, եթե ոչ անհնար, կլիներ լուծել առանձին-առանձին:

օրինակ՝ ճանապարհները վերանորոգելու կամ գյուղի ջրամատակարարման համակարգն արդիականացնելու համար: Գումարի մի մասը տրամադրվել է պետական բյուջեից, մնացածը՝ համայնքի կողմից: Համատեղ ռեսուրսներով գյուղին հաջողվել է կառուցել մարզահրապարակ և բացօթյա մարզադաշտ գյուղի կենտրոնում: Այս ամառ խումբը կազմակերպել է գյուղական տոնախմբություն՝ հրավիրելով ոչ միայն բնակիչներին, այլև հարևան համայնքների բնակիչներին:

Այս ժողովրդական ջանքերն օգնում են ամրապնդել սոցիալական կապերը: Գյուղացիները միասին լուծում են այնպիսի խնդիրներ, որոնք դժվար, եթե ոչ անհնար, կլիներ լուծել առանձին-առանձին: Հեշտիան յուրահատուկ գյուղ է, որտեղ բնակվում է կաթոլիկ հայ համայնք, որը խոսում է իր առանձնահատուկ բարբառով: Աշխարհագրական և մշակութային առումով այն որոշ չափով մեկուսացված է տարածաշրջանի մնացած հատվածից: Սակայն նման նախաձեռնությունները կարող են օրինակ ծառայել այլ համայնքների համար, հատկապես նրանց, որոնք արտերկրում մեծ սփյուռք ունեն: Խորհրդային Միության փլուզումից ի վեր արտագաղթը կիսով չափ կրճատել է տարածաշրջանի բնակչությունը, սակայն հեռացածների շրջանում պատկանելության զգացումը զարմանալիորեն աներեր է մնացել:

6. Կումուրդոն և դպրոցը, որը փոխեց ամեն ինչ

Վերջին շրջանի տեղական բարեգործության ամենաուշագրավ դրսևորումներից մեկը կարելի է գտնել Կումուրդո գյուղում, որտեղ նորաոճ, ժամանակակից դպրոցը փոխել է համայնքի դեմքն ու ապագան: 450 աշակերտի համար նախատեսված ընդարձակ շենքն ունի բազմաթիվ մարզադաշտեր, լողավազան և լիովին կահավորված դահլիճներ:[18] Շենքի ներսը ժամանակակից ձևով վերանորոգված է, համալրված գիտական լաբորատորիաներով և ժամանակակից դասարաններով: Նույնիսկ Ջավախեթիից այն կողմ՝ Վրաստանի մարզերում, քիչ դպրոցներ կարող են համեմատվել սրա հետ՝ իրենց որակով կամ մասշտաբով:

Այս նախագծի ետևում կանգնած բարերարի մասին ոչ մի պաշտոնական հիշատակում չկա՝ ոչ հուշատախտակ, ոչ ցուցանակ: Սակայն Կումուրդոյի յուրաքանչյուր բնակիչ գիտի, թե ով է դա հնարավոր դարձրել. Հայկ Մգդեսյանը՝ գյուղի բնիկ, որն իր հարստությունը ստեղծել է Ռուսաստանում և հարևան երկրներում արևածաղկի սերմերի մեծածախ առևտրով: Ի նշան նրա ներդրման՝ գյուղացիները հրավիրել են նրա տարեց մորը՝ կտրելու ժապավենը 2018 թվականին դպրոցի հանդիսավոր բացման արարողության ժամանակ: Այդ օրվա լուսանկարներում և տեսանյութերում գլխաշորով համեստ մի կին ժպտում է՝ կանգնած Վրաստանի կրթության նախարարի կողքին, ով այդ առիթով ժամանել էր

18 Դպրոցը կարող եք տեսնել հետևյալ հղումով՝ https://www.youtube.com/watch?v=MosdtHGQqEI

Կումուրդո։[19] Գյուղացիները հետագայում նրա անունով անվանակոչեցին այն փողոցը, որտեղ այժմ գտնվում է դպրոցը։

Դպրոցի ազդեցությունը դուրս է եկել կրթական ոլորտի սահմաններից։ Մինչև վերջերս այս մեծ գյուղի երեխաները դասի էին հաճախում հին դպրոցի քանդվող ավերակներում, որը տուժել էր ոչ միայն ժամանակից, այլև հրդեհից։ Այժմ մոտակայքում նոր մանկապարտեզ է կառուցվել։ Պետական գերատեսչությունները, այդ թվում՝ ոստիկանությունը և հանրային ծառայությունների սրահը, մասնաճյուղեր են բացել գյուղում։ Ասֆալտապատ ճանապարհներ են կառուցվել։ Կումուրդոն այլևս մոռացված ծայրամաս չէ, այլ աճող հեռանկարներով գյուղական կենտրոն։

Կումուրդոյի դպրոցն այլ է. այն Վրաստանի գյուղական վայրերում փոխակերպող ներդրումների հազվագյուտ օրինակ է, որն ունակ է ձևավորելու ոչ միայն համայնքի կրթական համակարգը, այլև ազդելու նրա ողջ զարգացման ընթացքի վրա։

Այս շարժը հատկապես տպավորիչ է՝ հաշվի առնելով Կումուրդոյի լարված անցյալը։ 2017 թվականին գյուղը հայտնվեց համազգային ուշադրության կենտրոնում, երբ տեղի բնակիչների և ուղղափառ հոգևորականների միջև թաղման իրավունքի շուրջ վեճը վերաճեց ոստիկանության հետ բախման։ Այդ ժամանակվա տեսանյութերում երևում էր, թե ինչպես են հատուկջոկատայինները արցունքաբեր գազ կիրառում՝ ցրելու գյուղացիներին, որոնցից շատերը հավաքվել էին 10-րդ դարի չգործող վրացական ուղղափառ տաճարի բակում, որը տեղացիներն օգտագործում էին աղոթքի համար։ [20] Մի քանի մարդ վիրավորվեց, և միջադեպը խորը հետք թողեց համայնքում՝ թե՛ հուզական, թե՛ քաղաքական։ Այս ֆոնին ժամանակակից դպրոցի կառուցումը, որը կառուցվել էր ոչ թե պետության, այլ Կումուրդոյի զավակներից մեկի կողմից, դարձավ տեղական դիմադրողականության և ինքնուրույնության հզոր խորհրդանիշ։

Ընդհանուր առմամբ, դպրոցի կառուցման և կահավորման վրա ծախսվել է ավելի քան 4 միլիոն դոլար։ Բացի այդ, Մգդեսյանը կրթաթոշակներ է սահմանել այն շրջանավարտների համար, որոնք ցանկանում են շարունակել կրթությունը։ Թեև տարածաշրջանում բարեգործական քայլերն անսովոր չեն, դրանք սովորաբար համեստ են լինում՝ գուցե տանիքի վերանորոգում, դասարանի համար պարագաներ։ Կումուրդոյի դպրոցն այլ է. այն Վրաստանի գյուղական վայրերում փոխակերպող ներդրումների հազվագյուտ օրինակ է, որն ունակ է ձևավորելու ոչ միայն համայնքի կրթական համակարգը, այլև ազդելու նրա ողջ զարգացման ընթացքի վրա։

19 “An Armenian-language school opened in the village of Kumurdo”, *1TV*, 17 հունվարի, 2018թ.։
20 “Confrontation Leaves Police Officers Injured in Akhalkalaki”, *Civil.ge*, 1 October 2017.

7. Հայկական հիմնադրամ և հիշողության թանգարաններ

Ջավախեթիում ներդրումների մեկ այլ ուղի է ստեղծվել ոչ թե պետության, այլ սփյուռքի միջոցով: «Աջակցություն Ջավախեթիին» հիմնադրամը հիմնվել է շուրջ մեկ տասնամյակ առաջ Հայաստանում, իսկ ավելի ուշ՝ Վրաստանում, մի խումբ գործարարների, հոգևորականների և հասարակական գործիչների կողմից, որոնք անձնական կամ ազգակցական կապեր ունեն տարածաշրջանի հետ:[21] Իր ստեղծման օրվանից հիմնադրամն աշխատել է պահպանելու տեղական ժառանգությունը և խթանելու կրթությունը՝ միաժամանակ պահպանելով ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի իշխանությունների աջակցությունը: Մի ժամանակաշրջանում, երբ քաղաքացիական խմբերի համար արտաքին ֆինանսավորումը գնալով ավելի դժվարամատչելի է դառնում, այս աջակցությունը վճռորոշ նշանակություն է ունեցել:

Հիմնադրամի առաջատար նախագծերից է Ջավախեթիի երկու ամենանշանակալի մշակութային հուշարձանների՝ 19-րդ դարի աշուղ և բանաստեղծ Ջիվանու և 20-րդ դարի սկզբի հայ գրականության կենտրոնական դեմքերից մեկի՝ Վահան Տերյանի տուն-թանգարանների ամբողջական վերականգնումը: Երկու թանգարաններն էլ գտնվում են բանաստեղծների՝ մերձակա գյուղերում տեղակայված հայրական տներում: Հիմնադրամի ներդրման շնորհիվ այս վայրերն այժմ ունեն ժամանակակից ցուցադրություններ և առաջարկում են էքսկուրսիաներ, որոնք գրավում են ինչպես տեղացիներին, այնպես էլ հեռվից ժամանած այցելուներին:

Կարևոր է, որ նման նախաձեռնությունները թույլ են տալիս սփյուռքահայերին պահպանել բովանդակալից կապեր այն տարածաշրջանի հետ, որը նրանք կամ իրենց ընտանիքները երբևէ տուն են կոչել: Թեպետ գխամասային գրասենյակը գործում է Հայաստանում, այն կարող է շարունակել ծառայել որպես արտաքին օգնությունը Ջավախեթիի համայնքներին հասցնելու սակավաթիվ կենսունակ ուղիներից մեկը, քանի դեռ արտաքին ֆինանսավորում ստանալը գնալով ավելի է բարդանում:

Հիմնադրամի ջանքերը չեն սահմանափակվում միայն շենքերի վերականգնմամբ: Այն ֆինանսավորել է երկու թանգարանների համար ժամանակակից կայքերի ստեղծումը, այդ թվում՝ վիրտուալ շրջագայությունների հիմնում, և կազմակերպել միջոցառումներ՝ Հայաստանի և Վրաստանի պաշտոնյաների մասնակցությամբ: Արդյունքը մշակութային վերածնունդն է, որը բարձրացնում է տարածաշրջանային հպարտությունը և ուշադրություն հրավիրում սահմանամերձ գոտու ընդհանուր ժառանգության վրա:

Կարևոր է, որ նման նախաձեռնությունները թույլ են տալիս սփյուռքահայերին պահպանել բովանդակալից կապեր այն տարածաշրջանի հետ, որը նրանք կամ իրենց ընտանիքները երբևէ տուն են կոչել: Միևնույն ժամանակ, հիմնադրամը մեխանիզմ է տրամադրում՝

21 “Աջակցություն Ջավախեթիին” հիմնադրամի, դրա նախագծերի և խորհրդի անդամների մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս հիմնադրամի պաշտոնական կայքէջը:

տեղական նախագծերին թափանցիկ և Վրաստանի իշխանությունների հետ համակարգված կերպով աջակցելու համար։ Թեպետ գիտամասային գրասենյակը գործում է Հայաստանում, այն կարող է շարունակել ծառայել որպես արտաքին օգնությունը Ջավախեթիի համայնքներին հասցնելու սակավաթիվ կենսունակ ուղիներից մեկը, քանի դեռ արտաքին ֆինանսավորում ստանալը գնալով ավելի է բարդանում։

Եզրակացություն

Ջավախեթին՝ Վրաստանի հարավում գտնվող լեռնային, հայաբնակ տարածաշրջանը, շարունակում է մնալ քաղաքական և մշակութային առումով առանձնահատուկ։ Աշխարհագրորեն և հոգեբանորեն մեկուսացված լինելով՝ այն շարունակում է ապրել երկրի հանրային կյանքից հեռու։ Չնայած պետության կողմից իրականացվող երկու տասնամյակի ինտեգրացիոն ծրագրերին և Հայաստանի, Թուրքիայի ու Վրաստանի մնացած մասի հետ ենթակառուցվածքային կապերի աճին, Ջավախեթիի մեծ մասը դեռևս գործում է ինքնամփոփ միջավայրում։ Վրացերենը հաճախ թերի են խոսում կամ ընդհանրապես չեն խոսում, և շատ բնակիչների համար դժվար է իրենց ընկալել որպես վրացական պետության մաս։

Տարածաշրջանի կառավարման ֆորմալ կառույցները թույլ են։ Թեև երկու շրջաններն էլ ունեն ընտրված խորհուրդներ, տեղական իշխանությունները սահմանափակ ազդեցություն ունեն։ Փոխարենը, իշխանություն հաճախ իրացնում են Վրաստանի անվտանգության ծառայությունները, որոնք գործում են անջատողականությունը կանխելու և անդրսահմանային հանցավորությունը վերահսկելու հանրահռչակված նպատակով։ Այս գերատեսչությունները պարբերաբար միջամտում են իրենց իրավասություններից դուրս գտնվող որոշումներին՝ կրթությունից մինչև մշակութային գործունեություն, և նրանք, ովքեր մարտահրավեր են նետում տիրող կարգերին, հաճախ բախվում են ահաբեկման փորձերի՝ ոչ միայն անձամբ, այլև իրենց ընտանիքների հանդեպ։ Այս միջավայրում ակտիվիզմը ոչ միայն դժվար է, այլև լի է իրական ռիսկերով։

Միևնույն ժամանակ, տարածաշրջանը չի կարող հույս դնել արտաքին դաշնակիցների վրա։ 1990-ականներին Հայաստանը համեստ քաղաքական և տնտեսական աջակցություն էր ցուցաբերում Ջավախեթիի հայերին։ Սակայն, երբ նրա աշխարհաքաղաքական դիրքերը թուլացան, իսկ տարածաշրջանային հաղորդակցության համար Վրաստանից կախվածությունն աճեց, Երևանն աստիճանաբար հետ քաշվեց։ 2000-ականների սկզբին այն սկսեց հեռավորություն պահպանել Ջավախեթիի ակտիվիստներից, որոնց հռետորաբանությունը դուր չէր գալիս Թբիլիսիին՝ խզելով երկարամյա քաղաքական կապերը։

Քաղաքական կոնֆորմիզմի այս օրինաչափությունը հատկապես ակնհայտ է դառնում Վրաստանի ընտրական փուլերի ժամանակ։ Անկախ նրանից, թե որ կուսակցություններն են գերիշխում համապետական քաղաքական դաշտում, Ջավախեթին հետևողականորեն ճնշող մեծամասնություն է ապահովել տվյալ պահին իշխող կուսակցության համար։ 2020 թվականի խորհրդարանական ընտրություններում տարածաշրջանը «Վրացական երազանք» կուսակցությանը տվեց ձայների ավելի քան 90%-ը՝ երկրում ամենաբարձր

ցուցանիշը: Նույնը տեղի ունեցավ 2012 թվականին, երբ Վրաստանի մեծ մասը դեմ քվեարկեց «Միացյալ ազգային շարժմանը», սակայն Ջավախեթին հաստատուն մնաց: Այս օրինաչափությունները կասկածներ և քննադատություն են հարուցում. ընդդիմադիր կուսակցությունները տեղացիներին մեղադրում են քաղաքական պասիվության մեջ, իսկ կառավարությանը՝ ընտրակեղծիքների: Սակայն քչերն են խորամուխ լինում այս խորապես արմատացած քաղաքական կոնֆորմիզմի բուն պատճառների կամ այն կառուցվածքային խթանների մեջ, որոնք տարածաշրջանը կապված են պահում իշխանության ղեկին գտնվող ուժի հետ:

Եվ այնուամենայնիվ, չնայած պետական վերահսկողությանը, մեկուսացման և ժողովրդագրական անկման ծանրությանը, Ջավախեթին զուրկ չէ քաղաքացիական կյանքից: Բնավ ոչ: Տեղի է ունենում լուռ, բայց բովանդակալից վերափոխում, որի շարժիչ ուժը ոչ թե կառավարության քաղաքականությունն է կամ օտարերկրյա դոնորները, այլ ժողովրդական գործիչները, որոնք խնդիրները լուծում են յուրովի:

Կումուրդոյում տեղացի բարերարի կողմից արված 4 միլիոն դոլարի նվիրատվությունը հանգեցրեց համաշխարհային կարգի դպրոցի կառուցմանը. մասնավոր բարեգործության այս քայլը հանրային ներդրումների մի ամբողջ շարան առաջացրեց՝ ճանապարհների, մանկապարտեզների և պետական ծառայությունների տեսքով: Հեշտիայում՝ կաթոլիկ հայկական գյուղում, WhatsApp-ի միջոցով գործող դրամահավաքը միջոցներ է հայթայթում ինչպես սփյուռքից, այնպես էլ տեղացիներից՝ վճարելով անհետաձգելի բժշկական օգնության, դպրոցական պարագաների և նույնիսկ հանրային մարզադաշտի համար:

Ակտիվիստները, ինչպիսիք են Գյուլնարա Էլիզբարյանը, որը գյուղերում սեմինարներ է վարում կանանց առողջության և քաղաքացիական կրթության թեմաներով, և Ենոք Բաբաջանյանը, որը կառուցել է տարածաշրջանի առաջին բարձր տեխնոլոգիական ջերմոցը և հիմնել թվային ֆերմերային ցանց, ցույց են տալիս, թե ինչպես կարող են գիտելիքն ու առաջնորդությունը ծնունդ առնել ժողովրդական միջավայրից: Մյուսները, ինչպես, օրինակ, Պարույր Մադոյանը, դարձել են համայնքային ժամանակագիրներ՝ ֆեյսբուքյան էջերը վերածելով հաշվետվողականության հարթակների: Օրջայում երիտասարդների կողմից ղեկավարվող գրքի ակումբը խթանում է քննադատական մտածողությունը և բաց երկխոսությունն այն թեմաների շուրջ, որոնք հազվադեպ են շոշափվում ֆորմալ կրթության մեջ: Իսկ «Աջակցություն Ջավախեթիին» հիմնադրամի միջոցով սփյուռքահայերը վերականգնում են մշակութային հուշարձաններ և կառուցում թանգարաններ, որոնք նաև ծառայում են որպես քաղաքացիական հարթակներ:

> Եթե աջակցությունը լինի անգամ նվազագույն ենթակառուցվածքով՝ գիտելիքի փոխանակման ցանցերով, տարածաշրջանային գործընկերների հետ կապերով, փոքր դրամաշնորհներով, այս ջանքերը կարող են դառնալ Ջավախեթիում կայուն քաղաքացիական մշակույթի հիմքը:

Այս նախաձեռնությունները, թեև համեստ իրենց մասշտաբով, խորհրդանշում են ավելի մեծ մի բան՝ տեղական ինքնուրույնությանն ուղղված միտում: Դրանք «նախագծեր» չեն՝ ՀԿ-ների ավանդական իմաստով, և չեն ղեկավարվում պրոֆեսիոնալ ակտիվիստների

կողմից։ Դրանք կառուցվածքային խնդիրների՝ կրթության, մեկուսացման, տնտեսական լճացման, տնային պայմաններում ստեղծված լուծումներ են, և դրանք հաջողում են, քանի որ վայելում են այն մարդկանց վստահությունը, որոնց ծառայում են։ Դրանց մեծ մասը ոչ ֆորմալ է, քիչ ծախսատար և հիմնված կամավորության վրա։ Այնուամենայնիվ, դրանք հաջողության են հասնում այնտեղ, որտեղ ֆորմալ կառույցները հաճախ ձախողվում են։

Մի ժամանակաշրջանում, երբ քաղաքացիական հասարակության համար տարածքը գնալով նեղանում է ամբողջ Վրաստանում, ժողովրդական կամավորությունը կարող է դառնալ ժողովրդավարական ներգրավվածության վերջին կենսունակ ձևը։ Իսկ Ջավախեթիում այն կարող է լինել միակ ձևը։

Եթե աջակցությունը լինի անգամ նվազագույն ենթակառուցվածքով՝ գիտելիքի փոխանակման ցանցերով, տարածաշրջանային գործընկերների հետ կապերով, փոքր դրամաշնորհներով, այս ջանքերը կարող են դառնալ Ջավախեթիում կայուն քաղաքացիական մշակույթի հիմքը։ Մի ժամանակաշրջանում, երբ քաղաքացիական հասարակության համար տարածքը գնալով նեղանում է ամբողջ Վրաստանում, ժողովրդականկամավորությունը կարող է դառնալ ժողովրդավարական ներգրավվածության վերջին կենսունակ ձևը։ Իսկ Ջավախեթիում այն կարող է լինել միակ ձևը։

Ի վերջո, այս տարածաշրջանում փոփոխությունները չեն սկսվելու Թբիլիսիից եկող ելույթներից կամ օտարերկրյա զարգացման ծրագրերից։ Դրանք սկսվելու են գյուղական խոհանոցներում, տնային գրադարաններում և ջերմոցներում, որտեղ, լռելյայն, բայց վստահաբար, դրանք արդեն իսկ սկսվել են։